«29» դեկտեմբեր 2023թ. ք. Երևան, Ս. Դավթի 87Ա

ՈՐՈՇՈՒՄ N 1045-Ա

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԻ ԿՈՂՄԻՑ ՉԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՐԿԱՅԻՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԳԱՆՁԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանս քննարկելով ֆիզիկական անձ Փրենի Էդվարդի Զախարյանսի վերաբերյալ վարչական վարույթի նյութերը

ՊԱՐԶԵՑԻ

Համաձայն հարկային վարչարարության իրականացման ընթացքում հնարավոր հարկային իրավախախտում հայտնաբերելուց անմիջապես հետո հարկային մարմնի պատասխանատու պաշտոնատար անձի կողմից կազմվող թիվ 6026/2023/Ե/Ա արձանագրության /կցվում է/ ֆիզիկական անձ Փրենի Էդվարդի Զախարյանսի (Երևան, Կենտրոն, Հին Երևանցու 2-24 անձնագիր՝ B56103647, ՀԾՀ՝ 7325020821) չկատարված հարկային պարտավորությունը 01.11.2023թ. դրությամբ կազմել է 7.584.026 դրամ, որից հարկ 7.064.108 դրամ, տույժ՝ 519.918 դրամ:

Վերոնշյալ պարտավորության մասով Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի իրավաբանական վարչությունում, համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի, չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ՝ վարչական ակտ ընդունելու նպատակով 11.12.2023թ. հարուցված վարչական վարույթի մասին հարկ վճարողը պատշաճ կերպով ծանուցվել է, սակայն չի ներկայացել վարույթի նյութերին ծանոթանալու համար և որևէ բացատրություն չի տվել:

ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից ստացված տեղեկությունների համաձայն ֆիզիկական անձ Փրենի Էդվարդի Զախարյանսը 29.12.2022թ. նվիրատվությամբ ֆիզիկական անձ Հարմիկ Վարանդի Զովելյանից ձեռք է բերել Երևան, Արաբկիր, Սևքարեցի Սաքոյի փող., շ 20, 6 բնակարանը՝ 63.1 մ2 մակերեսով:

Համաձայն 11.02.2021թ. թիվ 01/18-Շ-1488-190 շինարարության թույլատվության ֆիզիկական անձ Հարմիկ Վարանդի Զովելյանը հանդիսանում է Երևան, Արաբկիր, Սևքարեցի Սաքոյի փող.,20 շենք հասցեի կառուցապատող :

ՀՀ հարկային օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք)

- 140-րդ հոդվածին համապատասխան եկամտային հարկ վճարողներ են համարվում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձիք
- 141-րդ հոդվածին համապատասխան եկամտային հարկով հարկման օբյեկտ է համարվում՝ ռեզիդենտ ֆիզիկական անձանց համար՝ Հայաստանի Հանրապետության աղբյուրներից և (կամ)

Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից ստացվող համախառն եկամուտը, բացառությամբ Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատերերի և նոտարների ձեռնարկատիրական եկամուտների :

- 143-րդ հոդվածին համապատասխան՝ եկամտային հարկով հարկման բազա է համարվում հարկվող եկամուտը, որը որոշվում է որպես համախառն եկամտի և Օրենսգրքի 147-րդ հոդվածով սահմանված նվազեցվող եկամուտների դրական տարբերություն :
- 147-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են համախառն եկամտից նվազեցվող եկամուտները : Նույն հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի համաձայն նվազեցվող եկամուտ է համարվում Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ ժառանգության և (կամ) նվիրատվության կարգով ֆիզիկական անձանցից ստացվող գույքը և (կամ) դրամական միջոցները : *Սույն կետի կիրառության իմաստով՝ նվազեցվող եկամուտ չի համարվում Օրենսգրքի 145-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված՝ կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվության կարգով ստացվող գույքը :*
- 150-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմանված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սույն մասով սահմանված դրույքաչափերի տարեկան սանդղակով:

Օրենսգրքի 17-րդ հոդվածի համաձայն՝ բնամթերային (ոչ դրամական) ձևով արտահայտված գործարքների ու գոռնառնությունների շրջանակներում ձևավորվող հարկման բազաներ ու ակտիվների սկզբնական արժեքները որոշվում են ազատ (շուկայական) գների հիման վրա՝ ՀՀ կառավարության 09.03.2017թ. N241-Ն որոշման N1 հավելվածով :

Հաշվի առնելով վերոնշյալը ֆիզիկական անձի մոտ կառուցապատող համարվող ֆիզիկական անձից նվիրատվությամբ գույքի ձեռքբերման մասով առաջանում է եկամտային հարկի պարտավորություն՝ Օրենսգրքի 150-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե նույն հոդվածի 2-15-րդ մասերով այլ բան սահմնված չէ, ապա հարկման բազայի նկատմամբ եկամտային հարկը հաշվարկվում է սյուն մասով սահմանված դրույքաչափերի սանդղակով :

Ֆիզիկական անձ Փրենի Էդվարդի Զախարյանսի կողմից իրականացված վերը նշված գործարքի մասով սահմանված ժամկետում հարկային մարմին չի ներկայացվել 2022թ.եկամտային հարկի տարեկան հաշվարկը և չի կատարվել հարկերի վճարումը:

Արդյունքում սույն որոշմամբ գանձման ենթակա օրենքով սահմանված ժամկետում չկատարված հարկային պարտավորությունը կազմում է 7.584.026 դրամ, որից հարկ 7.064.108 դրամ, տույժ՝ 519.918 դրամ, որն առաջացել է ֆիզիկական անձի կողմից սահմանված ժամկետում 2022թ. եկամտային հարկի տարեկան հաշվարկը չներկայացնելու, ինչպես նաև հարկի գումարը սահմանված ժամկետում չվճարելու հետևանքով ՀՀ հարկային օրենսգրքի 401-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տույժերից:

Գանձման ենթակա չկատարված պարտավորության նկատմամբ օրենքով սահմանված կարգով և չափերով հաշվարկվում են տույժեր, որոնք ենթակա են կատարման մինչև սույն որոշման կատարման օրը՝ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերի հետ միասին:

Սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում հարկային պարտավորության վճարման անհնարինության վերաբերյալ բավարար ապացույցներ ներկայացվելու դեպքում, եթե դրանք ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից կհամարվեն հիմնավոր, հարկային մարմինը ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված արգելադրման գործընթաց չի իրականացնի:

Վերոգրյալի հիման վրա, ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 398-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով, «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55, 56, 58, 88 հոդվածներով՝

ՈՐՈՇԵՑԻ

1. Ֆիզիկական անձ Փրենի Էդվարդի Զախարյանսից գանձել 7.584.026 դրամ պարտավորության գումար, ինչպես նաև սույն որոշման կատարման օրվա դրությամբ ՀՀ հարկային օրենսգրքով կամ օրենքով սահմանված կարգով հաշվարկված տույժերը համաձայն ստորև ներկայացված աղյուսակի՝

01.11.2023թ-ի դրությամբ չկատարված հարկային պարտավորությունները գանձելու վերաբերյալ

Հ/Հ	Հարկի և այլ պարտադիր վճարի տեսակը	Հաշվարկված հարկ/վճար		Հաշվարկված տույժ	Հաշվարկված տուգանք	Ընդամենը	Վճարման ուղղությունը	Հաշվի համարը
		առաջացման ամսաթիվ	գումար					
1	2	3	4	5	6	7= 4+5+6	8	9
1	Եկամտային հարկ	01.05.2023թ	7.064.108	519.918		7.584.026	պետական բյուջե	900008000490

2. Սույն որոշումն օրենքով սահմանված ժամկետում անբողոքարկելի դառնալուց հետո ուղարկել կատարման ՀՀ ԱՆ ՀԿ ծառայություն:
3. Որոշման օրինակն եռօրյա ժամկետում ուղարկել ֆիզիկական անձին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 59 հոդվածով սահմանված կարգով՝ իրազեկելուն հաջորդող օրվանից:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել վարչական մարմին, կամ վերադաս վարչական մարմին՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 70-րդ և 71-րդ հոդվածներով սահմանված կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում կամ ՀՀ վարչական դատարան:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ ԱՐԵՆ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Ստացա որոշման օրինակը _____ _____

Ստորագրություն հարկ վճարողի /կամ ֆիզ. Անձի/ պաշտ անձի անուն ազգանուն ամսաթիվ

Կատարող՝ ՀՀ ՊԵԿ, իրավաբանական վարչություն
Զարուհի Ֆարմանյան, հեռ. 010-30-91-91 /91-27/: